ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/3

ք. Երևան 01 .02. 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Արմեն Գևորգյան Սարգսի ԱՁ-ն, ի դեմս Ա. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համացանցային (www) էջի ձևավորման, տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման, գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2 240 000 (երկու միլիոն երկու հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ, որից

- համացանցային (www) էջի ձևավորման ծառայությունների համար՝ **730 000 (յոթ հարյուր երեսուն հազար)** ՀՀ դրամ,
- տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների համար՝ **720 000 (յոթ հարյուր քսան հազար)** ՀՀ դրամ,
- գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների համար՝ **790 000 (յոթ հարյուր իննսուն հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության՝ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	**ԿԱՏԱՐՈՂ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	Արմեն Գևորգյան Սարգսի Ա/Ձ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան, Նորաշեն թաղ., 18շ. բն.111,
կառավարական տուն 3	<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 19300981544300,
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 27982382
Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Գևորգյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

«01» 02 Հավելված N 1
2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափաբաժին 1

Համացանցային (www) էջի ձևավորման ծառայություններ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	72411300/2		դրամ	730 000	1	ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական 3-րդ շենք, 4-րդ հարկ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաջորդող օրվանից մինչև 20.12.2021թ.

Տեխնիկական բնութագիրը

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝
- ինտերնետային էջերի մշակում,
- ինտերնետային կայքի անխափան աշխատանքի ապահովում,
- ինտերնետային կայքում նոր մոդուլների ստեղծում,*
- պարբերաբար ինտերնետային կայքի տեխնիկական թարմացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով ժամանակին համահունչ,
– ինտերնետային կայքի ամենօրյա (ըստ անհրաժեշտության) թարմացում,
- կայքում նոր էջերի տեղադրում,**
- կայքում նոր հղումների, նկարների և ինֆորմացիոն ֆայլերի ավելացում,**
- խմբագրական աշխատանքները (տեղեկատվության փոփոխում, տեղափոխում, հեռացում, հին տեղեկատվության արխիվացում),**
- նախագահի, նախագահի տեղակալների, կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների համար կոմիտեի կայքին ամրացված էլեկտրոնային փոստերի սպասարկում,***
- նոր հասցեների ավելացում:

**Կատարումը 2 աշխատանքային օրվա ընթացքում,*

***Կատարումը 1 աշխատանքային օրվա ընթացքում,*

****Կոմիտեի կառուցվածքային փոփոխությունների դեպքում՝ ամբողջ ծավալի կատարումը Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում:*

Չափաբաժին 2

Տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայություններ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	72711100/1		դրամ	720 000	1	ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական 3-րդ շենք, 4-րդ հարկ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև 20.12.2021թ.

Տեխնիկական բնութագիրը

Համակարգչային ցանցի տեխնիկական և ծրագրային սպասարկում, ցանցում համատեղ օգտագործման ծրագրերի սպասարկում, ցանցում տվյալների բազաների տեղադրում և սպասարկում:

- ինտերնետային կապի և էլեկտրոնային փոստի հասանելիություն ապահովող սերվեր համակարգչի շուրջօրյա անխափան աշխատանքի ապահովումը,
- համակարգչային ներքին (լոկալ) ցանցի կապերն ապահովող ցանցային համակարգչի (domain controler) շուրջօրյա անխափան աշխատանքի ապահովումը,
- համակարգչային ներքին (լոկալ) ցանցին միացված բոլոր համակարգիչների ցանցային հասանելիության ապահովումը,
- համակարգչային ներքին (լոկալ) ցանցի բոլոր բաժանորդների համար հակավիրուսային ծրագրային փաթեթի ամենօրյա թարմացումը և գործարկումը,
- համակարգչային ներքին (լոկալ) ցանցի բոլոր բաժանորդների համար հակավիրուսային ծրագրի միջոցով համակարգչի աշխատունակության ստուգումը,
- ցանցային համակարգչում ցանցային ծրագրային փաթեթների տեղադրումը և կարգաբերումը,
- համակարգչային ներքին (լոկալ) ցանցի միջոցով տվյալների փոխանցման շուրջօրյա իրականացման ապահովումը,
- տվյալների փոխանցման անվտանգության և գաղտնիության ապահովումը (ցանցը պետք է լինի պաշտպանված, փակ ցանց և կապված չպետք է լինի ոչ մի այլ համակարգչային ցանցի),
- համակարգչային ներքին (լոկալ) ցանցի ընդլայնման հնարավորության ապահովումը (նոր համակարգիչների միացում գործող ցանցին),
- համակարգչային ներքին (լոկալ) ցանցի տեխնիկական սպասարկման աշխատանքները (ցանցային սարքավորումների սպասարկում, վերանորոգում և փոխարինում նոր համարժեք սարքերով):

Չափաբաժին 3

*Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ**

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	50311100/1		դրամ	790 000	1	ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական 3-րդ շենք, 4-րդ հարկ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև 20.12.2021թ.

Տեխնիկական բնութագիրը
Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մեջ ներառված են ներքոհիշյալ ծառայությունները՝ • Microsoft Server 2016 և FreeBSD, օպերացիոն համակարգերով սերվերների ժամանակավոր ֆայլերի մաքրում, ծրագրային և համակարգային թարմացումների տեղադրում, օգտագործողների բազայի թարմացում, լոգ ֆայլերի արտածում, գրանցված թերությունների հայտնաբերում և վերացում, • սերվերների վնասված օպերացիոն համակարգերի վերատեղադրում և կարգաբերում (windows server Server 2016 2016 FreeBSD) անընդհատ աշխատանքը ապահովելու նպատակով, • համակարգիչների և սերվերների պրոֆիլակտիկա և դիագնոստիկա, առաջացած տեխնիկական խնդիրների ու թերությունների հայտնաբերում, ախտորոշում, խնդիրների վերացում առանց պահեստամասերի, • Domain controler Server 2016 համակարգի սպասարկում, Կորպորատիվ ցանցում առկա բոլոր համակարգիչների գրանցում տվյալ domain-ում, նոր օգտատերերի բացում, կարգաբերում և առաջացած խնդիրների թերությունների հայտնաբերում և վերացում, • Հայկական Ծրագրերի Հաշվապահ համակարգի սպասարկում, առաջացած խնդիրների ախտորոշում և վերացում, ծրագրի թարմացման աշխատանքեր, և բազաների կրկնօրինակում շաբաթական, • Mdaemon mail սերվերի առկա օգտագործողների բազաների և սերվերների հետ ինտեգրում, նոր բազաների ստեղծում, էլ. փոստերի ստեղծում և բազաների կրկնօրինակում շաբաթական, • Microsoft File Server 2016 R2 արխիվացիաների քաղաքականության մշակում և իրականացում, օգտագործողների ֆայլային ռեսուրսների ինտեգրում, հասանելիության իրավունքների բաշխում, տեղեկատվության վերականգնում և կրկնօրինակում ամենօրյա, • FreeBSD օպերացիոն համակարգի միջոցով աշխատակայաններում ինտերնետ կայքերի հասանելիության իրավունքների տրամադրում proxy սերվերի միջոցով, թերությունների և խախտումների արտածում, ներթափանցման վտանգների կանխում, sqstat համակարգի միջոցով բոլոր օգտատերերի լոգ ֆայլերի ստեղծում, • աշխատատեղերում windows 7 օպերացիոն համակարգերի փոխարինում windows 10 օպերացիոն համակարգով, • սերվերների և համակարգիչների ծրագրային փաթեթների տեղադում (office 2016, Kdwin, acrobat reader, fonts arm/rus, antivirus, Winrar, Java, flash player), • հատուկ ծրագրերի միջոցով վնասված օպերացիոն համակարգերից ինֆորմացիայի վերականգնում, • վիրուսներից վնասված համակարգչների աշխատունակության վերականգնում • գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop, COREL, PROMT, AUTOCAD, Matematica), • սերվերների և համակարգիչների խափանված մասերի փոխարինում առանց պահեստամասերի (մայրական սալիկ, կոշտ սկավառակ, օպերատիվ հիշողության սարք, CPU հովհացուցիչ, սնուցման բլոկ, ցանցային քարտ), • անխափան սնուցման սարքերի դիագնոստիկա և խափանված մարտկոցներիի փոխարինում առանց մարտկոցների, • կորպորատիվ ցանցում գտնվող բազմաֆունկցիոնալ տպիչների, սկաներների, բազմաֆունկցիոնալ սարքերի և պատճենահանող սարքերի ընդհանուր օգտագործման իրավունքների բաշխում, օգտագործողների մոտ դրանց հետ կապված ծրագրային ապահովում, • կորպորատիվ ցանցում գտնվող համակարգչային տեխնիկայի ընդհանուր օգտագործման իրավունքների բաշխում, օգտագործողների մոտ դրանց հետ կապված ծրագրային ապահովում:

**Պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից նոր ձեռքբերված համակարգիչների սպասարկումը Կատարողն իրականացնում է անվճար:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մարտյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
Արմեն Գևորգյան Սարգսի Ա/Ձ
ք. Երևան, Նորաշեն թաղ., 18շ. բն.111,
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300981544300,
ՀՎՀՀ 27982382

Տնօրեն՝

_____ Ա. Գևորգյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 01 » 02 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72411300/2	Համացանցային (www) էջի ձևավորման ծառայություններ	-	-	-	300 000	300 000	300 000	500 000	500 000	500 000	730 000	730 000	730 000	730 000
2	72711100/1	Տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայություններ	-	-	-	204 500	204 500	204 500	422 200	422 200	422 200	720 000	720 000	720 000	720 000
3	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	-	-	-	277 300	277 300	277 300	474 000	474 000	474 000	790 000	790 000	790 000	790 000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝		-	-	-	**781 800**	**781 800**	**781 800**	**1 396 200**	**1 396 200**	**1 396 200**	**2 240 000**	**2 240 000**	**2 240 000**	**2 240 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գանձապետական վարչություն
Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Լեմտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
Արմեն Գևորգյան Սարգսի Ա/Ձ
ք. Երևան, Նորաշեն թաղ., 18շ. բն.111,
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300981544300,
ՀՎՀՀ 27982382

Տնօրեն՝

_____ Ա. Գևորգյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
« 01 » 02 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց՝	Ծառայությունն ընդունեց՝
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 01 » 02 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/3 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց՝
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն